ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիս 2026թ.

«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու կամ Ընկերություն) միջև 2024 թվականի օգոստոսի 13-ին կնքված N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/57-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) միակողմանի լուծման ընթացքում արձանագրված հետևյալ փաստական և իրավական հանգամանքները.

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸՊայմանագրի շրջանակներում Կապալառուն ստանձնել էր «ՀՀ Սյունիքի մարզի գ. Վերին Խոտանանի բնակավայրի կրթահամալիրի» կառուցման աշխատանքների կատարման պարտավորությունը: Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի դեկտեմբերի 10-ը: Օրացուցային գրաֆիկով Ընկերությունը ստանձնել է հստակ և անվերապահ պարտավորություններ՝ աշխատանքների առանձին տեսակներն իրականացնել հետևյալ փուլերով ու ժամկետներում.

«Հողային» աշխատանքներ՝ 2025 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2026 թվականի հունվար ամիսը,

«Հիմքեր» տեսակի աշխատանքներ՝ 2026 թվականի հունվար ամսից մինչև հունիս ամիսը,

«Նկուղային հարկի ե/բ հիմնակմախք, ներառյալ ծածկի սալը»՝ 2026 թվականի մարտ ամսից մինչև հունիս ամիսը, «Արտաքին էլեկտրամատակարարում», «Արտաքին կոյուղի և կեղտաջրերի հավաքման հոր» և «Արտաքին ջրամատակարարում» տեսակի աշխատանքներ՝ մեկնարկը 2025 թվականի մայիս ամսին:

2. ԼՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պատվիրատուի և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից իրականացված ընթացիկ վերահսկողության և շինարարական հրապարակ պարբերական փաստացի այցելությունների ու մշտադիտարկման արդյունքում պաշտոնապես արձանագրվել է, որ Կապալառուն թույլ է տվել ստանձնած պարտավորությունների էական և կոպիտ խախտումներ, մասնավորապես՝ «Հիմքեր» տեսակի աշխատանքները, թեև սահմանված ժամկետում մեկնարկել են, սակայն ներկայումս իրականացված է նախատեսված աշխատանքների միայն չնչին (փոքր) մասը: «Նկուղային հարկի ե/բ հիմնակմախք, ներառյալ ծածկի սալը», ինչպես նաև արտաքին ինժեներական ցանցերի («Արտաքին էլեկտրամատակարարում», «Արտաքին կոյուղի և կեղտաջրերի հավաքման հոր» և «Արտաքին ջրամատակարարում») աշխատանքներն առհասարակ մեկնարկած չեն, ինչն արդեն իսկ հանդիսանում է հաստատված Օրացուցային գրաֆիկի ուղղակի և կոպիտ խախտում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների վերջնական ավարտի ընդհանուր ժամկետից (10.12.2026թ.) տևական ժամանակ առաջ Կապալառուի կողմից փաստացի կատարված է ամբողջ աշխատանքների ընդամենը 4.31 տոկոսը: Հաշվի առնելով հիշյալ աշխատանքների մեծ ծավալները, ինչպես նաև շինարարական նորմերով ու տեխնոլոգիական կանոններով նախատեսված բետոնե կոնստրուկցիաների համապատասխան նյութերի ամրություն ստանալու (խնամքի) անհրաժեշտ ժամանակահատվածը՝ օբյեկտիվորեն և տեխնիկապես անհնար է նշված աշխատանքներն ավարտել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 10-ը: Աշխատանքների կատարման նման չափազանց ցածր տեմպերը և անգործությունը անժխտելիորեն փաստում են, որ մնացած 95.69% ծավալուն շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացումն ու դրանց վերջնական ավարտը մինչև սահմանված վերջնաժամկետը դարձել է ակնհայտ անիրատեսական և անհնարին:

Ելնելով վերոգրյալից, Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրի 3.1.4 կետով, 2026 թվականի հունիսի 2-ից միակողմանի լրիվ լուծել է N ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/57-1 ծածկագրով պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/57	ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/57-1	«ՀՀ Սյունիքի մարզի գ. Վերին Խոտանանի բնակավայրի կրթահամալիրի» կառուցման աշխատանքների կատարում	Սկզբնական գումար՝ 1,103,297,816 ՀՀ դրամ Տեղակապված գումար՝ 1,541,998,174	«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ	03578646	ԻԻՀ, ք,Թեհրան, , Ծահիդ Բեհեշի փ. 310շ, 1-ին հարկ ՀՀ, Կոտայք, Առինջ, Արտաշատ-Սևան խճ., 61 տաղավար	02.06.26	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետեր/ Կապալառուն խախտել է պայմանագրի օրացուցային գրաֆիկը և Կապալառուն աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար	

1. Յույն որոշումը պատշաճ կարգով տրամադրել լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարություն)՝ «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, և դրա մասին պաշտոնապես ծանուցել Ընկերությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա է հրապարակման օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**